Հավելված N 530
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ.հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության տնտեսական հետազոտությունների վարչության (այսուհետ՝ Վարչություն) մակրոտնտեսական հետազոտությունների բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 23-32.24-Մ2-1)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի ավագ մասնագետը կամ Բաժնի պետը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան N 5

2. Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. իրականացնում է արդիական գիտական հենքի հիման վրա մակրոտնտեսական հետազոտություններ, վերլուծություններ և մշտադիտարկումներ, տնտեսական ազդեցությունների գնահատման աշխատանքներ,
2. իրականացնում է էկոնոմետրիկ և կառուցվածքային մոդելների կառուցման, դրա հիման վրա համապատասխան գնահատումների հետ կապված աշխատանքները,
3. իրականացնում է բազմավեկտոր խորքային տնտեսական հետազոտությունների և վերլուծությունների միջոցով տնտեսական զարգացման ռազմավարական ուղենիշերի նախանշման աշխատանքները,
4. իրականացնում է տեղական և միջազգային գիտահետազոտական ինստիտուտների, հետազոտական կենտրոնների և կազմակերպությունների հետ համագործակցության ուղղությամբ աշխատանքները,
5. Նախարարության այլ ստորաբաժանումների հետ համատեղ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ՀՀ շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների հետ համագործակցելովէ իրականացնում է Վարչության գործունեության ոլորտին վերաբերող օրենքների և իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները:

Իրավունքները՝

• ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն արդիական գիտական հենքի հիման վրա մակրոտնտեսական հետազոտություններ, վերլուծություններ և մշտադիտարկումներ, տնտեսական ազդեցությունների գնահատման աշխատանքների իրականացման համար,
• ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն էկոնոմետրիկ և կառուցվածքային մոդելների կառուցման, դրա հիման վրա համապատասխան գնահատումներ վերաբերյալ կարծիքներ և առաջարկություններ,
• ստանալ բազմավեկտոր խորքային տնտեսական հետազոտությունների և վերլուծությունների միջոցով տնտեսական զարգացման ռազմավարական ուղենիշերի նախանշման աշխատանքները,
• Ստանալ տեղեկատվություն տեղական և միջազգային գիտահետազոտական ինստիտուտների, հետազոտական կենտրոնների և կազմակերպությունների հետ համագործակցության ուղղությամբ աշխատանքների վերաբերյալ,
• առնչվել իր գործառույթների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվությանը,
• մասնակցել այլ մարմիններում կազմակերպվող քննարկումներին, նիստերին:

Պարտականությունները՝

• ուսումնասիրել և վերլուծել արդիական գիտական հենքի հիման վրա մակրոտնտեսական հետազոտությունների, վերլուծությունների և մշտադիտարկումների աշխատանքները
• ուսումնասիրել և վերլուծել էկոնոմետրիկ և կառուցվածքային մոդելների կառուցման, դրա հիման վրա համապատասխան գնահատումներ վերաբերյալ ստացված կարծիքները և առաջարկությունները
• վերլուծել տնտեսական զարգացման ռազմավարական ուղենիշերի մշակման վերաբերյալ տեղեկատվությունը,
• մշակել տնտեսական զարգացման ռազմավարական ուղենիշեր,
• մշակել տեղական և միջազգային գիտահետազոտական ինստիտուտների, հետազոտական կենտրոնների և կազմակերպությունների հետ համագործակցության ուղղությամբ նախապատրաստական աշխատանքները,
• մշակել իրավական ակտերի նախագծեր, նախապատրաստել զեկույցներ, շնորհանդեսներ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

1	**Ուղղություն**	Սոցիալական գիտություններ, լրագրություն և տեղեկատվական գիտություններ	Բնական գիտություններ, մաթեմատիկա և վիճակագրություն	
2	**Ոլորտ**	Սոցիալական և վարքաբանական գիտություններ	Մաթեմատիկա և վիճակագրություն	
3	**Ենթաոլորտ**	Տնտեսագիտություն	Միջոլորտային մասնագիտություններ	Վիճակագրություն
4	**Մասնագիտություն**		Ֆինանսական մաթեմատիկա	

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Ժամանակի կառավարում
2. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
3. Փոփոխությունների կառավարում
4. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում
5. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: